ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման և էներգետիկ փոխկապակցվածության խթանում – EU4Energy, Փուլ III (CEER)



Իրականացման ժամանակահատված: 01.01.2026 - 31.12.2029

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 6 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of European Energy Regulators (CEER)

Նախագծի կայքէջ: ceer.eu/eu4energy-phase-iii/

Նախագծի նկարագրություն:

Եվրամիության աջակցությամբ իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման և էներգետիկ փոխկապակցվածության խթանում – EU4Energy, Փուլ III» նախագիծը, որը իրականացվում է Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից, նպատակ ունի աջակցել Արևելյան գործընկերության երկրներում ցածր ածխածնային և մաքուր էներգիայի անցմանը, ինչպես նաև զարգացնել տարածաշրջանային էներգետիկ փոխկապակցվածությունը:
Ծրագիրը ներառում է հինգ բաղադրիչ: Դրանց շրջանակում CEER-ը կաջակցի
• Հայաստանին՝ լիովին ինտեգրված և մրցունակ էլեկտրաէներգիայի շուկայի զարգացմանը,
• Ադրբեջանին՝ կայուն էներգետիկ ոլորտի բարեփոխումների առաջխաղացմանը և կառավարման համակարգերի ամրապնդմանը,
ինչպես նաև կնպաստի Հարավային Կովկասի և Թուրքիայի միջև էներգետիկ փոխկապակցվածության զարգացմանը, կխթանի տարածաշրջանային համագործակցությունը և կբարձրացնի EU4Energy ծրագրի գործողությունների և արդյունքների տեսանելիությունը Արևելյան գործընկերության բոլոր հինգ երկրներում:

Ակնկալվող արդյունքներ:

1. Հայաստանում էլեկտրաէներգիայի շուկայի լիարժեք ազատականացում:
2. Ադրբեջանում էլեկտրաէներգիայի շուկայի աստիճանական ազատականացում և բացում:
3. Հարավային Կովկասում և Թուրքիայում սահմանային էներգետիկ փոխկապակցումների պլանավորման և իրականացման համար բազմակողմ կարգավորող համագործակցության առաջընթաց:
4. Արևելյան գործընկերության երկրներում ԵՄ էներգետիկ օրենսդրության և եվրոպական լավագույն փորձի հետ ավելի մեծ համապատասխանեցում:
5. Արևելյան գործընկերության երկրներում EU4Energy ծրագրի գործողությունների և արդյունքների ավելի մեծ տեսանելիություն: